Աշոտ
ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Աշխատել է պետական կառավարման համակարգի տարբեր ոլորտներում և ունի երկարամյա փորձ: 513 հրապարակումների և հոդվածների, այդ թվում՝ 47 մենագրության (ներառյալ՝ կոլեկտիվ) հեղինակ է: Ներկայում «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ է:

https://orcid.org/0000-0002-5077-4253

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

DOI: 10.52174/2579-2989_2023.3-78

Հիմնաբառեր. *վճարային հաշվեկշիռ, տնտեսության արդյունավետություն, ընթացիկ հաշիվ, ապրանքների ու ծառայությունների արտահանում և ներմուծում, ֆինանսական կապիտալի արտահանում*

Յուրաքանչյուր տնտեսության վիճակի, տնտեսական կապերի ինտենսիվության, այդ կապերի արդյունավետության ամփոփ ցուցանիշների (բնութագրիչների) համակարգում ուրույն և առանձնահատուկ տեղ ունի վճարային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշռի միջոցով կարելի է գնահատել տվյալ երկրի տնտեսական ներուժը, ինչպես նաև պատկերացում կազմել արտաքին աշխարհի հետ նրա ունեցած տնտեսական հարաբերությունների և՛ արդյունքների, և՛ հետևանքների մասին: Նշված խնդիրը կարևոր է դառնում մասնավորապես՝ փոքր և բաց տնտեսությամբ երկրների պարագայում, որոնց վրա առանձնապես մեծ է համաշխարհային տնտեսության ազդեցությունը: Այդ ազդեցության գնահատումը, ինչպես նաև երկրի՝ նոր ոլորտներ մտնելը, արտահանման և ներմուծման ուղղություններն ու ծավալները փոփոխելը էական ազդեցություն են թողնում ոչ միայն տվյալ երկրի սոցիալ-տնտեսական, այլև յուրաքանչյուր քաղաքացու կենսամակարդակի բարձրացման գործում:

Հեղինակները վճարային հաշվեկշիռների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա քննարկել են մի խումբ, այդ թվում՝ տարածաշրջանի երկրների վճարային հաշվեկշիռների առանձին բաղադրիչները, կատարել դրանց համեմատություններ ինչպես կառուցվածքային միավորումների, այնպես էլ որոշակի և առանձին խումբ երկրների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական ցուցանիշների համակարգում առանձնահատուկ դերակատարում և կարևորություն

ունի վճարային հաշվեկշիռը: Այն լիարժեքորեն նկարագրում է ազգային տնտեսության վիճակը և դրա շարժընթացը, հարուստ տեղեկություններ տրամադրում ազգային տնտեսության և աշխարհի մյուս երկրների միջև տնտեսական փոխհարաբերությունների, այն է՝ արտադրության գործոնների, այդ թվում՝ ապրանքների և ծառայությունների, դրամական փոխանցումների, կապիտալի և ֆինանսական հոսքերի վերաբերյալ: Հեղինակների համոզմամբ՝ այդ գործիքը հնարավոր է կիրառել երկրի տնտեսության արդյունավետությունը գնահատելիս, ինչը կարող է կողմնորոշիչ լինել տարբեր տեսակի և, հատկապես, տարածաշրջանային տնտեսական միությունների ստեղծման համար: Այսինքն՝ կատարված հաշվարկների արդյունքները վկայում են, որ տնտեսական միությունների ձևավորման և ազգային շահի հիմքում պետք է ընկած լինեն նշված ցուցանիշի հաշվարկները: Վերջիններս այն կարևոր ատաղձն են, որը պետք է ակտիվ մասնակցություն ունենա երկրի ներսում իրականացվող տնտեսական բարեփոխումներում:

Վճարային հաշվեկշռի կազմման, ձևավորման և մեթոդաբանական հիմնադրույթների ու դրանց գործնական կիրառման գործընթացներն իրականացվել և ներկայում էլ իրականացվում են Արժույթի միջազգային հիմնադրամի մշակած «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ուղեցույց. 6-րդ հրատարակություն // Արժույթի միջազգային հիմնադրամի հիման վրա»[1]:

Վճարային հաշվեկշռի մեթոդաբանության նկարագրության ճանապարհին ի հայտ են գալիս որոշակի դժվարություններ, որոնցից ելնելով էլ՝ երկրները միմյանցից անկախ մշակում են համապատասխան ընթացակարգեր: Ուստի յուրաքանչյուր մեթոդաբանություն կարելի է համարել եզակի: Դրանով կարելի է հետևել որոշ օրինաչափությունների, սակայն տարբեր երկրների փորձառությունները տարբեր մոտեցումներ են ձևավորում ամենահարմար մեթոդաբանության վերաբերյալ[2]:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի է) կետի դրույթների՝ ՀՀ կենտրոնական բանկը վարում է ՀՀ արտաքին հատվածին վերաբերող հաշիվների՝ վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վիճակագրություն: Ըստ ԿԲ-ի կողմից ներկայում կիրառվող մեթոդաբանության և փորձառության՝

- Վճարային հաշվեկշիռը վիճակագրական հաշվետվություն է, որտեղ արտացոլվում են ժամանակի որոշակի միավորի ընթացքում (սովորաբար, եռամսյակի, տարվա) տվյալ երկրի ռեզիդենտների և ոչ ռե-

[1] Էլեկտրոնային ռեսուրսն առկա է 16.08.2023 թ. դրությամբ, https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf

[2] Էլեկտրոնային ռեսուրսն առկա է 16.08.2023 թ. դրությամբ, https://www.imf.org/external/pubs/ft/bop/2016/pdf/Guiderus.pdf

Մերուժան ՄԱՐԿՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2008 թ.-ին ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի կողմից արժանացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի: Վերապատրաստումներ, դասընթացներ է անցել, ինչպես նաև գործունեություն ծավալել աշխարհի տարբեր երկրների կազմակերպություններում: Այժմ աշխատում է «Քաղաքագիտական, իրավագիտական և տնտեսագիտական հետազոտությունների և կանխատեսումների» ՀԿ-ում:

https://orcid.org/0000-0003-3608-0375

զիդենտների միջև իրականացվող բոլոր տնտեսական գործառնությունները:

- Ընթացիկ հաշիվը վճարային հաշվեկշռի որոշակի խումբ գործառնությունների համակցություն է՝ կապված ապրանքների, ծառայությունների, սկզբնական և երկրորդային եկամուտների հետ:
- Կապիտալի հաշիվը կապիտալ տրանսֆերտների ու չարտադրված ոչ ֆինանսական ակտիվների ձեռքբերման (վաճառքի) գործառնություն է՝ իրականացված երկրի ռեզիդենտների ու ոչ ռեզիդենտների միջև:
- Ֆինանսական հաշիվն արտացոլում է արտաքին աշխարհի հետ կատարվող այն բոլոր գործառնությունները, որոնց արդյունքում տեղի է ունենում ռեզիդենտների արտաքին ֆինանսական ակտիվների և/կամ պարտավորությունների փոփոխություն: Ֆինանսական հաշիվը կազմված է 5 հոդվածից՝ օտարերկրյա ուղղակի, պորտֆելային, այլ ներդրումներից, ֆինանսական ածանցյալներից և պահուստային ակտիվներից[3]:
- Սխալներն ու բացթողումներն ամենահետաքրքրականն են՝ իրենց առանձնահատկությունների շնորհիվ, քանի որ հաշվարկի յուրաքանչյուր շեղում հաշվի է առնվում երկրի արտահանման և ներմուծման արժեքը բացահայտելիս: Ի վերջո, դրանք ընդամենը ուղղիչ են՝ գտնելու այն մեծ կամ փոքր տարբերությունները, որոնք կարող են հայտնաբերվել հաշվապահական գործառնություններ իրականացնելիս[4]:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը

Վիճակագրական և հաշվապահական տեսանկյունից, վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի ռեզիդենտների և աշխարհի մյուս երկրների միջև որոշակի ժամանակահատվածում (որպես կանոն, մեկ տարվա ընթացքում) իրականացված բոլոր տնտեսական գործարքների արդյունքների համակարգված գրառումներն են: Վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս տվյալ երկրի և աշխարհի մյուս երկրների միջև ոչ թե անհատական, այլ համախառն գործարքները:

Վճարային հաշվեկշիռը, լինելով որոշակի երկրի և աշխարհի մյուս երկրների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների վիճակը նկարագրող փաստաթուղթ, կարևորագույն կողմնորոշիչ նյութ է պարունակում մակրոտնտեսական քաղաքականության, ներառյալ՝ հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրի, արտարժութային մշակման համար:

Ամեն մի երկրի տնտեսական կապերն այլ երկրների հետ իրենց արտահայտությունն են գտնում վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցության մասին տեղեկությունների կարևոր աղբյուր է: Դրա միջոցով հնարավոր է բացահայտել երկրի մասնակցության ծավալներն ու որակը, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերը: Վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Այն արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆինանսների շարժի հետ կապված բոլոր արտաքին տնտեսական գործառնությունները, որոնք որոշակի ժամանակահատվածում իրականացվում են տվյալ երկրի և մյուս երկրների ռեզիդենտների միջև:

Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրի արժութային և ֆինանսական վիճակը, կատարելու վերլուծություններ և դրանց հիման վրա՝ էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը: Այսպես՝ տնտեսության զարգացման վրա էական ազդեցություն է թողնում այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին կապիտալի միջազգային հոսքն է: Ժամանակակից

[3] Էլեկտրոնային ռեսուրսն առկա է 16.08.2023 թ. դրությամբ, https://www.cba.am/storage/am/downloads/parberakan/dvq/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%A2%D5%A1%D5%B-C%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6.pdf

[4] Էլեկտրոնային ռեսուրսն առկա է 16.08.2023թ. դրությամբ, https://www.economiafinanzas.com/que-es-la-balanza-de-pagos/

պայմաններում միջազգային արժութային, ինչպես նաև փոխատվական կապիտալի շուկաներում գործարքների ծավալներն այնքան են ավելացել, որ մի քանի անգամ գերազանցում են միջազգային առևտրի ծավալները:

Յուրաքանչյուր երկիր տնտեսական քաղաքականություն մշակելիս պետք է հստակ պատկերացում ունենա ոչ միայն իր, այլև մյուս երկրների մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածության կառուցակարգի մասին: Դա հնարավորություն կտա հաջողությամբ լուծելու տնտեսական քաղաքականությամբ նախատեսված խնդիրները:

Այլ կերպ ասած, վճարային հաշվեկշիռը փաստաթուղթ է, որտեղ որոշակի ժամանակահատվածի համար (տարի, եռամսյակ, ամիս) հաշվառվում են տվյալ երկրի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները): Այն ցույց է տալիս յուրաքանչյուր երկրի ֆինանսական դրությունը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում: Ինչպես երևում է սահմանումից, վճարային հաշվեկշիռն արտացոլում է ապրանքների, ծառայությունների, եկամուտների, տրանսֆերտների և ֆի-նանսների հետ կատարվող արտաքին տնտեսական գործարքները տվյալ երկրի և այլ երկրների ռեզիդենտների միջև՝ որոշակի ժամանակահատվածում:

Վճարային հաշվեկշիռն արտացոլում է ոչ թե անհատական, այլ համախառն գործարքներ տվյալ երկրի և այլ երկրների միջև: Քանի որ վճարային հաշվեկշիռը բնորոշում է տվյալ երկրի ֆինանսական վիճակը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, ապա դառնում է մակրոտնտեսական քաղաքականության մշակման կարևոր կողմնորոշիչ: Խոսքը, մասնավորապես, հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրային, արժութային և այլ քաղաքականությունների մասին է: Բացի դրանից,

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Նախկին Խորհրդային Միության և ԵԱՏՄ հանրապետությունների վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդները 2017-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար[5]

Երկիրը	2017	2018	2019	2020	2021	2017-2021՝ հանրագումարային
Հայաստան	-1,060.4	-1,379.5	-925.9	-1,365.5	-743.3	-5,474.8
Ադրբեջան	4,345.4	13,397.8	10,016.1	826.2	16,267.7	44,853.2
Վրաստան	-2,529.1	-2,505.7	-2,134.4	-4,067.0	-3,840.8	-15,077.0
Ռուսաստան	69,140.3	233,372.0	126,821.1	78,149.7	244,638.0	752,121.0
Բելառուս	-366.5	222.6	-554.8	-355.9	1,086.2	31.6
Էստոնիա	1,821.7	1,304.4	2,028.7	-134.7	4,349.6	9,369.7
Լատվիա	1,338.7	1,623.5	826.0	4,263.9	-818.1	7,234.0
Լիտվա	1,660.9	2,434.6	4,233.8	8,104.1	4,793.5	21,226.8
Ղազախստան	-13,777.4	2,328.1	-10,602.6	-31,709.0	-9,441.2	-63,202.2
Ղրղզստան	-779.5	-766.4	-838.2	700.6	-180.7	-1,864.1
Մոլդովա	-1,014.7	-2,383.3	-2,346.0	-2,085.0	-3,431.1	-11,260.1
Ուզբեկստան	-1,858.7	-5,759.6	-10,130.1	-8,238.5	-12,776.1	-38,763.0
Ուկրաինա	-6,110.0	-9,448.0	-5,784.0	12,030.0	-4,082.0	-13,394.0
Տաջիկստան	302.1	-937.9	-369.8	1,752.0	1,589.6	2,336.0
Թուրքմենստան[6]	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	
Ընդամենը ԽՄ	51,112.9	231,502.7	110,239.8	57,870.8	237,411.0	688,137.2
Ընդամենը ԵԱՏՄ	53,156.4	233,776.7	113,899.5	45,419.9	235,358.9	681,611.4

[5] Այս և հաջորդ աղյուսակները կազմել և հաշվարկել են հեղինակները՝ https://data.worldbank.org/ կայքի տվյալների հիման վրա:

[6] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:

վճարային հաշվեկշիռը, ըստ էության, մակրոտնտեսական վերլուծության և կանխատեսման գործարքներից մեկն է: Դրա օգնությամբ հնարավոր է պարզել, թե ինչպես է զարգացել արտաքին առևտուրը որոշակի ժամանակահատվածում: Վճարային հաշվեկշիռն անմիջական ազդեցություն է ունենում արտադրության, զբաղվածության, սպառման և արժույթի փոխարժեքի վրա: Այն հնարավորություն է տալիս հետևելու օտարերկրյա ներդրումների ներգրավման ձևերին, արտասահմանում կատարվող ներդրումներին, երկրի արտաքին պարտքի ժամանակին մարմանը և այլն: Միաժամանակ, վճարային հաշվեկշիռը ցույց է տալիս, թե երկրի կենտրոնական բանկն ինչպես է փոփոխել իր միջազգային պահուստների մակարդակը, վճարումների անհավասարակշռվածությունը:

Աղյուսակ 1-ում բերված են Խորհրդային Միության և ԵԱՏՄ հանրապետությունների վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդները 2017-2021 թթ.-ի համար՝ մլն ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 1-ից հետևում է, որ՝

- Խորհրդային Միության հանրապետություններից բոլոր տարիներին վճարային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդ են ունեցել ՌԴ-ն, Ադրբեջանը և Լիտվան: ՌԴ և Ադրբեջանի վճարային հաշվեկշռի դրական հաշվեմնացորդը պայմանավորված է բնական և, հատկապես, էներգետիկ ռեսուրսների (հիմնականում՝ նավթի և գազի) արտահանման ծավալներով, իսկ Լիտվայինը՝ այն տնտեսական էֆեկտով, որը վերջինս ձեռք է բերել Եվրոպական միության անդամ դառնալուց հետո:
- Հայաստանը և Վրաստանը նշված ժամանակահատվածում մշտապես ունեցել են վճարային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդ:
- Մնացած հանրապետություններում վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը եղել է անկայուն, այսինքն՝ որոշակի տարիների՝ բացասական, իսկ այլ տարիների՝ դրական: 2017-2021 թթ., վճարային հաշվեկշռի հանրագումարի տեսանկյունից, բացասական հաշվեմնացորդ են ունեցել Ղազախստանը, Ղրղզստանը, Մոլդովան, Ուզբեկստանը, Ուկրաինան և Տաջիկստանը:
- Եթե մի պահ վերացարկվենք և ընդունենք, որ Խորհրդային Միության հանրապետությունները ձևավորել են տնտեսական միություն, ապա, կենսունակության տեսանկյունից, դա իրավունք կունենա գոյություն ունենալու, քանի որ այդ միության կազմի մեջ մտնող հանրապետությունների տնտեսական փոխհարաբերությունների արդյունքները նշված բոլոր տարիներին եղել են դրական:
- Նույնը վերաբերում է նաև ԵԱՏՄ-ին, քանի որ վերջինիս կազմում ընդգրկված հանրապետությունների վճարային հաշվեկշիռների մնացորդները հանրագումարում եղել են դրական:

Զգալի հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության և նրա հարևան երկրների վճարային հաշվեկշիռների ուսումնասիրությունը: Աղյուսակ 2-ում Հայաստանի և հարևանների վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդ-

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդները 2017-2021 թթ., մլն ԱՄՆ դոլար*

Երկիրը	2017	2018	2019	2020	2021	2017-2021՝ հանրագումար
Հայաստան	-1,060.4	-1,379.5	-925.9	-1,365.5	-743.3	-5,474.8
Ադրբեջան	4,345.4	13,397.8	10,016.1	826.2	16,267.7	44,853.2
Վրաստան	-2,529.1	-2,505.7	-2,134.4	-4,067.0	-3,840.8	-15,077.0
Ռուսաստան	69,140.3	233,372.0	126,821.1	78,149.7	244,638.0	752,121.0
Թուրքիա	-99,330.0	2,496.0	10,302.0	-78,860.0	-11,304.0	-176,696.0
Ընդամենը	**-29,433.8**	**245,380.6**	**144,078.9**	**-5,316.6**	**245,017.5**	**599,726.5**

** Իրանի Իսլամական Հանրապետության տվյալներն առկա չեն:*



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդները 2017-2021 թթ., ԱՄՆ դոլար

ներն են (մլն ԱՄՆ դոլար, 2017-2021 թթ.):

Աղյուսակ 2-ից հետևում է, որ՝

- 2017-2021 թթ. հանրագումարում Թուրքիայի, Վրաստանի վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդները եղել են բացասական, իսկ Ադրբեջանինը՝ դրական:

Վճարային հաշվեկշռի ակներևությունը ներկայացնելու նպատակով գծապատկեր 1-ում ՀՀ և տարածաշրջանի երկրների վճարային հաշվեկշիռների հաշվեմնացորդների շարժընթացն է 2017-2021 թթ.-ի համար:

Աղյուսակ 3-5-ում Հարավային Կովկասի երեք հանրապետությունների վճարային հաշվեկշիռներն ու դրանց բաղադրիչներն են:

Նշված աղյուսակներից հետևում է, որ՝

- Հայաստանի և Վրաստանի ընթացիկ հաշիվը նշված ժամանակահատվածի բոլոր տարիներին եղել է բացասական, 2017-2021 թթ. հանրագումարում դա կազմել է -3,88 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ Վրաստանինը՝ -7,4 մլրդ ԱՄՆ դոլար:
- Ադրբեջանի ընթացիկ հաշիվը նշված ժամանակահատվածում 20,1 մլրդ ԱՄՆ դոլար է (դրական նշանով):
- Ընթացիկ հաշվի ամենամեծ ազդեցությունը վճարային հաշվեկշռի մնացորդի վրա ՀՀ-ում (հանրագումարում՝ 59 տոկոս, բացասական իմաստով) և Վրաստանում (հանրագումարում՝ 49 տոկոս, բացասական իմաստով) է, մինչդեռ Ադրբեջանում դա կազմել է 41 տոկոս (դրական իմաստով):
- Զուտ կապիտալի հաշվի համաձայն՝ 2017-2021 թթ. հանրագումարում տվյալ ցուցանիշի մեծությունը Հայաստանում -5% է, Վրաստանում՝ -2%, իսկ Ադրբեջանում՝ 0:
- Զուտ ֆինանսական հաշվի համաձայն՝ նշված ժամանակահատվածի հանրագումարում տվյալ ցուցանիշը և՛ Հայաստանում, և՛ Վրաստանում, և՛ Ադրբեջանում 50% է:
- Զուտ սխալների և բացթողումների հաշվի համաձայն՝ նշված ժամանակահատվածի հանրագումարում տվյալ ցուցանիշը Հայաստանում -2% է, իսկ Վրաստանում և Ադրբեջանում՝ 3% (դրական իմաստով):

Յուրաքանչյուր պետության համար կարևոր են ոչ միայն վճարային հաշվեկշռի արդյունքներն ու բաղադրիչները, այլև, թե ինչպես են ձևավորվում վճարային հաշվեկշռում առկա բաղադրիչները կամ, այլ կերպ ասած, որքանով է արդյունավետ տվյալ երկրի տնտեսությունը: Եթե արդյունավետությունը հասկանանք որպես այնպիսի տնտեսական կատեգորիա, որը բնութագրվում է տվյալ պետության ար-

ԱՂՅՈՒՍԱԿ 3

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար) և կառուցվածքը (տոկոս) 2017-2021 թթ.

Անվանումը	2017	100%	2018	100%	2019	100%	2020	100%	2021	100%	2017-2021՝ հանրագումար	100%
Զուտ ֆինանսական հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	-530.2	50.0%	-689.8	50%	-463.0	50%	-682.8	50%	-371.6	50%	-2,737.4	50%
Զուտ սխալներ և բացթողումներ (մլն ԱՄՆ դոլար)	-402.6	38.0%	164.0	-12%	479.5	-52%	-250.3	18%	93.3	-13%	84.0	-2%
Զուտ կապիտալի հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	46.3	-4.4%	70.6	-5%	54.5	-6%	45.4	-3%	50.1	-7%	266.8	-5%
Ընթացիկ հաշվի մնացորդ (մլն ԱՄՆ դոլար)	-173.9	16.4%	-924.3	67%	-997.0	108%	-477.8	35%	-515.1	69%	-3,088.2	56%
Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդ	-1,060.4		-1,379.5		-925.9		-1,365.5		-743.3		-5,474.8	

ԱՂՅՈՒՍԱԿ 4

Ադրբեջանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար) և կառուցվածքը (տոկոս) 2017-2021 թթ.

Անվանումը	2017	100%	2018	100%	2019	100%	2020	100%	2021	100%	2017-2021՝ հանրագումար	100%
Զուտ ֆինանսական հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	2,172.7	50%	6,698.9	50%	5,008.1	50%	413.1	50%	8,133.8	50%	22,426.6	50%
Զուտ սխալներ և բացթողումներ (մլն ԱՄՆ դոլար)	387.8	9%	646.4	5%	661.8	7%	648.0	78%	-153.6	-1%	2,190.5	5%
Զուտ կապիտալի հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	100.4	2%	1.4	0%	-18.6	0%	-7.4	-1%	-4.2	0%	71.6	0%
Ընթացիկ հաշվի մնացորդ (մլն ԱՄՆ դոլար)	1,684.6	39%	6,051.1	45%	4,364.9	44%	-227.6	-28%	8,291.6	51%	20,164.5	45%
Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդ	4,345.4		13,397.8		10,016.1		826.2		16,267.7		44,853.2	

ԱՂՅՈՒՍԱԿ 5

Վրաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար) և կառուցվածքը (տոկոս) 2017-2021 թթ.

Անվանումը	2017	100%	2018	100%	2019	100%	2020	100%	2021	100%	2017-2021' հանրագումար	100%
Զուտ ֆինանսական հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	-1,264.5	50%	-1,252.8	50%	-1,067.2	50%	-2,033.5	50%	-1,920.4	50%	-7,538.5	50%
Զուտ սխալներ և բացթողումներ (մլն ԱՄՆ դոլար)	-39.3	2%	-136.7	5%	-89.7	4%	-93.9	2%	-21.2	1%	-380.9	3%
Զուտ կապիտալի հաշիվ (մլն ԱՄՆ դոլար)	83.1	-3%	76.1	-3%	47.1	-2%	41.1	-1%	38.2	-1%	285.4	-2%
Ընթացիկ հաշվի մնացորդ (մլն ԱՄՆ դոլար)	-1,308.2	52%	-1,192.2	48%	-1,024.5	48%	-1,980.6	49%	-1,937.4	50%	-7,443.0	49%
Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդ	-2,529.1		-2,505.7		-2,134.4		-4,067.0		-3,840.8		-15,077.0	

դյունքի ձեռքբերման համար օգտագործվող կամ շրջանառության մեջ ներդրված ռեսուրսների հարաբերակցությամբ, ապա կարող ենք ընդունել, որ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը բնութագրում է երկրի բոլոր ռեսուրսների օգտագործումից ստացված արդյունքի հանրագումարը՝ իր 4 տնտեսական կտրվածքով՝ ընթացիկ հաշիվ (հիմնականում ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում), զուտ ֆինանսական հաշիվ, կապիտալի հաշիվ, զուտ սխալներ և բացթողումներ: Վերը թվարկվածները, ըստ էության, յուրաքանչյուր պետության արտադրության գործոններն են (ապրանքներ և ծառայություններ, կապիտալ և ֆինանսներ), որոնք և ձևավորում են տվյալ երկրի վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը: Իսկ, որպես պետության ծախսերի ցուցանիշ, հաշվարկներում օգտագործել ենք ՀՆԱ-ն, քանի որ վերջինիս հաշվարկման մեթոդներից մեկը հենց ծախսերի հաշվարկումն է: Այսինքն՝ պետության համար տնտեսության արդյունքի վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդի հարաբերակցությունը վկայում է պետության տնտեսության արդյունավետության մասին: Հասկանալի է նաև, որ վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդը և ՀՆԱ-ն լիարժեքորեն չեն բնութագրում տվյալ պետության արժեքի շարժը վճարային հաշիվներում: Բանն այն է, որ նախորդ տարվա ՀՆԱ չիրացված մի մասն արժեքավորվում և իրացվում է հաջորդ տարվա կամ տարիների ընթացքում: Նույն ձևով՝ տվյալ տարեվերջի արդյունքի և ՀՆԱ մի մասն իրացվում է հաջորդ տարվա կամ տարիների ընթացքում, այսինքն՝ երկարաժամկետում արտադրության գործոնների՝ շրջանառության մեջ ներգրավումն ու դրանց իրացումը հավասարակշռվում են և նպաստում տվյալ պետության հնարավորությունների, ինչպես նաև համաշխարհային տնտեսության հետ ունեցած փոխհարաբերությունների ավելի ստույգ գնահատմանը՝ դրանով իսկ ձևավորելով դրական կամ բացասական հաշվեմնացորդով վճարային հաշվեկշիռ: Այդ նպատակով աղյուսակ 6-ում արտացոլված տվյալները հաշվարկված են ոչ միայն ըստ առանձին տարիների, այլև ըստ 5 տարվա հանրագումարի:

Վճարային հաշվեկշռի բաղադրիչների արժեքների գումարման տեսանկյունից,

կարծում ենք, որ մեթոդաբանության իմաստով դա տրամաբանական է, քանի որ թեև ապրանքի և ծառայության արժեքին գումարվում է կապիտալի կամ ֆինանսների արժեքը, դա ունի նույնչափ համասեռ դրամական միավոր: Բացի այդ, յուրաքանչյուր երկրում ռեսուրսների տնտեսական շրջանառությունը կատարվում է այն նպատակով, որ տնտեսության մեջ ներդրվող կապիտալ ներդրումներն ու ֆինանսներն առաջիկայում դառնան ապրանք, ծառայություն, առևտրաշրջանառության առարկա: Հասկանալի է, որ արտադրության ռեսուրսների նման ձևով հաշվառումը և երկրի տնտեսական արդյունավետության գնահատման հաշվարկներում դրա կիրառումը ունեն որոշակի մոտավորություն: Բայց, այդ ամենով հանդերձ, կարծում ենք՝ աղյուսակ 6-ում բերված տվյալները պատկերացում են տալիս նշված երկրների տնտեսությունների արդյունավետության մակարդակի գնահատման մասին և բացի այդ, կարող են հիմք հանդիսանալ այս կամ այն երկրների խմբերի միջև տնտեսական միությունների ձևավորման ու նոր միությունների առաջացման համար: Աղյուսակ 6-ի տվյալներից դժվար չէ պատկերացնել, որ Խորհրդային Միության ձևավորման համար «կենտրոնաձիգ» է եղել Ռուսաստանի Դաշնության դերակատարումը, քանի որ միայն ՌԴ-ի միջոցով է ապահովվել «անխախտ» հանրապետությունների միությունը, որը կարող էր հանդես գալ որպես առանձին տնտեսական միություն: Նման ձևով՝ տարբեր պետությունների համակցության արդյունքում, «դոմինանտ» (գերիշխող) պետության առկայությունը կարող է նպաստել վերջինիս շուրջ մի խումբ պետությունների համախմբմանը՝ դրանով իսկ ձևավորելով «նոր միության» տնտեսական հիմքը:

Աղյուսակ 6-ում ներառված են վճարային հաշվեկշռի մնացորդով երկրի տնտեսության արդյունավետության գնահատման արդյունքները Խորհրդային Միության և ԵԱՏՄ հանրապետություններում, 2017-2021 թթ., տոկոսներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր երկրի վճարային հաշվեկշիռ բնութագրում է տվյալ տնտեսության արդյունքների փոխհարաբերությունը համաշխարհային տնտեսության հետ՝

ԱՂՅՈՒՍԱԿ 6

Վճարային հաշվեկշռի հաշվեմնացորդով երկրի տնտեսության արդյունավետության գնահատման արդյունքները նախկին Խորհրդային Միության և ԵԱՏՄ հանրապետություններում, 2017-2021 թթ., տոկոս

ԽՄ երկրներ	2017	2018	2019	2020	2021	2017-2021[1] հանրագումարային
Հայաստան	-9.2%	-11.1%	-6.8%	-10.8%	-5.4%	-10.6%
Ադրբեջան	10.6%	28.4%	20.8%	1.9%	29.8%	19.2%
Վրաստան	-15.6%	-14.2%	-12.2%	-25.7%	-20.6%	-17.6%
Ռուսաստան	4.4%	14.1%	7.5%	5.2%	13.8%	9.2%
Բելառուս	-0.7%	0.4%	-0.9%	-0.6%	1.6%	10.6%
Էստոնիա	6.8%	4.3%	6.5%	-0.4%	11.7%	6.0%
Լատվիա	4.4%	4.7%	2.4%	12.3%	-2.1%	4.2%
Լիտվա	3.5%	4.5%	7.7%	14.3%	7.2%	7.6%
Ղազախստան	-8.3%	1.3%	-5.8%	-18.5%	-4.8%	-7.1%
Ղրղզստան	-10.1%	-9.3%	-9.4%	9.0%	-2.1%	-4.5%
Մոլդովա	-10.5%	-20.8%	-19.6%	-17.6%	-25.1%	-19.2%
Ուզբեկստան	-3.0%	-10.9%	-16.9%	-13.8%	-18.5%	-12.8%
Ուկրաինա	-5.5%	-7.2%	-3.8%	7.7%	-2.0%	-1.8%
Տաջիկստան	4.0%	-12.1%	-4.5%	21.5%	18.2%	5.8%
Թուրքմենստան[7]	-	-	-	-	-	-
Ընդամենը ԽՄ	*2.3%*	*9.9%*	*4.5%*	*2.7%*	*9.2%*	5.9%
ԵԱՏՄ երկրներ	3.0%	12.3%	5.9%	2.6%	11.5%	7.2%

[7] Թուրքմենստանի տվյալները բացակայում են:

արտացոլվելով համապատասխան բաղադրիչների միջոցով:

Հեղինակների կարծիքով՝ մակրոտնտեսական այդ կարևոր գործիքը կարող է օգտագործվել նաև պետության տնտեսական քաղաքականության գնահատման և արդյունավետության մակարդակի բնորոշման նպատակով: Բացի այդ, երկրի տնտեսության արդյունավետության գնահատման կառավարման տեսանկյունից, դա յուրահատուկ «հայելի» է, որն արտացոլում է տնտեսական քաղաքականության թույլ և ուժեղ կողմերը՝ դրանով իսկ կանխորոշելով արդյունավետ պետության գոյության և կառուցման տնտեսական հիմքը: Ավելին, ինչպես պնդում են հեղինակները, այդ չափանիշը պետք է ընկած լինի ինչպես «ազգային շահ» հասկացության, այնպես էլ տնտեսական միությունների ձևավորման ու անդամակցության որոշման հիմքում: Նման մոտեցումը կարող է ունենալ «կողմնացույցի» դերակատարում և՛ տնտեսական, և՛ արտաքին քաղաքականության մշակման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Cairnes J.E., Some leading principles of political economy newly expounded, New York: Harper and Brothers, 1874, pp 421.
2. Samuelson, P. A. Economics: An Introductory Analysis, 1st ed. New York: McGraw-Hill. 1948.
3. Geoffrey Crowther, Balances and Imbalances of Payments, Boston, Mass.: Harvard University Graduate School of Business Administration, 1957, Pp. vii, 70.
4. Razgallah, B. 2004. “The Balance of Payments Stages ‘Hypothesis’: A Reappraisal.” Presented at the 21st Symposium on Banking and Monetary Economics in Nice.
5. Alberto Behar & Armand Fouejieu, "External adjustment in oil exporters: The role of fiscal policy and the exchange rate," The World Economy, Wiley Blackwell, vol. 41(3), 2018, pages 926-957.
6. Никитина М.Г., Буценко И.Н., Селюнина В.С. Платежный баланс как механизм определения тенденций развития внешнеэкономических связей и индикатор макроэкономического равновесия экономики России // Финансы и кредит. 2019.Т. 25, № 2. С. 375-391. https://doi.org/10.24891/ fc. 25. 2.375
7. https://www.imf.org/external/russian/pubs/ft/bop/2007/bopman6r.pdf
8. https://www.imf.org/external/pubs/ft/bop/2016/pdf/Guiderus.pdf
9. https://www.bis.org/ifc/publ/ifcb48f.pdf
10. https://www.cba.am/storage/am/downloads/parberakan/dvq/%D4%B2%D5%A1%D6%81%D5%A1%D5%BF%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%A2%D5%A1%D5%BC%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6.pdf
11. https://www.economiafinanzas.com/que-es-la-balanza-de-pagos/
12. https://data.worldbank.org/
13. https://theglobaleconomy.com

Ашот МАРКОСЯН
Старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор экономических наук, профессор

Меружан МАРКОСЯН
Общественная организация «Политологических, юридических и экономических исследований и прогнозирований», кандидат экономических наук

АРМЕНИЯ И МИР

ПЛАТЕЖНЫЙ БАЛАНС ГОСУДАРСТВА И СВОДНАЯ ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ЭКОНОМИКИ

Платежный баланс занимает своеобразное и особое место в системе сводных показателей (характеристик) состояния каждой экономики, интенсивности и эффективности экономических отношений. Через платежный баланс можно получить представление и оценить как экономический потенциал страны, так и особенности последствий и результатов экономических отношений с внешним миром. Упомянутая проблема становится особенно актуальной для стран с малой и открытой экономикой, экономика которых особенно подвержена влиянию мировой экономики. Как оценка этого воздействия, так и выход в новые отрасли экономики, изменение направлений и объемов экспорта и импорта страны оказывают существенное влияние на повышение уровня жизни данной страны как в социально-экономическом плане, так и для каждого гражданина. На основе изучения и анализа платежного баланса авторами рассмотрены отдельные составляющие платежного баланса группы стран, в том числе стран региона, проведены их отдельные сопоставления, как для отдельных структурных объединений и так и для отдельных групп стран.

Ключевые слова: *платежный баланс, экономическая эффективность, текущий счет, экспорт и импорт товаров и услуг, экспорт финансового капитала*

Ashot MARKOSYAN
Senior Expert at «Amberd» Research Center, ASUE, Doctor of Economics, professor

Meruzhan MARKOSYAN
Political, Legal and Economic Researches and Forecasting NGO, PhD in Economics

ARMENIA AND WORLD

BALANCE OF PAYMENTS OF THE STATE AND CONSOLIDATED ASSESSMENT OF THE EFFICIENCY OF THE ECONOMY

The balance of payments holds a unique and special position in the system of summary indicators characterizing the state of any economy and the intensity and effectiveness of its economic relationships. Through the balance of payments one can gain insight into and evaluate not only a country's economic potential but also the outcomes of its economic interactions with the global community. This issue becomes especially important for countries with small and open economies that are highly susceptible to global economic trends. Both the assessment of this impact and entering new sectors of the economy, shifts in the directions and volumes of the country's exports and imports have a significant influence on raising the living standards of the given country, both socio-economically and for individual citizens of the country. In this paper we delve into the study and analysis of the balance of payments, discussing its distinct components within the region. We make separate comparisons, both within structural associations and among distinct group of countries.

Keywords: *balance of payments, economic efficiency, current account, export and import of goods and services, export of financial capital*